

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

«-----» ----- 2009թ. N-----

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի դրույթները, Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արտենի համայնքի վարչական սահմաններում գտնվող գույքն՝ համաձայն հավելվածի հետ վերցնել և նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արտենի համայնքին՝ վերանորոգելու և համայնքի կարիքավոր բնակիչներին սեփականության իրավունքով որպես կացարան տրամադրելու պայմանով:

2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը և նվիրաբերության պայմանագրի կնքումը՝ նախատեսելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արտենի համայնքի միջոցների հաշվին:

Հավելված
ՀՀ կառավարության ----- թվականի
----- «-----»-ի ----- որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ

Անվանումը	Հասցեն	Շահագործման հանձնելու տարեթիվը	Քանակը	Սկզբնական արժեքը /դրամ/	Գույքի մակերեսը	Հաշվեկշռային արժեքը /դրամ/
Գրասենյակի շենք	Արտենի համայնք	1958թ.	1	2762900	310.12 մ ²	0
Ավտոտնակ 20 տեղանոց	Արտենի համայնք	1958թ.	1	525500	328.39 մ ²	0

Հիմնավորում

»Գույք նվիրաբերելու մասին« Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

«Գույք նվիրաբերելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ Նախագահի 2008 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թվականի հունվարի 10-ից փետրվարի 17-ը Հայաստանի Հանրապետության մարզերում և համայնքներում նախընտրական հանդիպումների ընթացքում արժարժված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների մասին» N ՆԿ-128-Ա կարգադրության հանձնարարականի պահանջով, համաձայն որի «Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը պատկանող շինությունները /գրասենյակային և ավտոտնտեսության տարածքներ/ պետք է փոխանցվեն համայնքին վերանորոգելու և սեփականության իրավունքով համայնքի կարիքավոր բնակիչներին որպես կացարան տրամադրելու նպատակով:

ՀՀ Նախագահի վերը նշված կարգադրության հանձնարարականի կատարումն ապահովելու և համայնքի կարիքավոր ընտանիքների կացարանով ապահովելու խնդիրը լուծելու նպատակով ներկայացվել է սույն որոշման նախագիծը: Նվիրաբերվող գույքի մակերեսը կազմում է 638.39մ², որից 310.12 մ² բնակելի, իսկ 328.39 մ²՝ արտադրական նշանակության:

ՀՀ վարչապետի 2009 թվականի հոկտեմբերի 16-ի 02/24.2/6140-09 թվակիր հանձնարարականի համաձայն՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում քննարկվել է «Գույք նվիրաբերելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության զեկուցագիրը: Զննարկմանը մասնակցել է նաև ՀՀ Արագածոտնի մարզի Արտենի համայնքի ղեկավարը և տեղեկացրել, որ համայնքում կան 10-ից ավելի անապահով ընտանիք և որոշման նախագծի ընդունումից հետո նշված գույքի բաշխումը կատարվելու է հաշվի առնելով ընտանիքների անապահովության աստիճանը, ընտանիքի անդամների, անչափահասների և աշխատունակների թիվը /նշվածը հավաստվում է նաև ՀՀ Արագածոտնի մարզի Արտենի համայնքի ղեկավարի 06.11.09թ. թիվ 77 գրությամբ՝ կցվում է/:

**Հայաստանի Հանրապետության կառավարության
աշխատակազմի ղեկավար
պարոն Դ. Սարգսյանին**

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2009 թվականի հոկտեմբերի 16-ի 02/24.2/6140-09 թվակիր հանձնարարականի՝ քննարկման է ներկայացվում «Գույք նվիրաբերելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի լրամշակված տարբերակը:

Առդիր՝ էջ և էլեկտրոնային կրիչ:

Հարգանքով՝

Գ. Ալավերդյան